

**«ԷԿՈԼՈԳԻԱ Վ.Կ.Հ» ՍՊԸ**  
Վնասակար նյութերի սահմանային թույլատրելի  
արտանետումների (ՍԹԱ)  
նորմատիվների նախագիծ



Տնօրեն

Խ. ՍՈՐՐՈՎՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2018

## Կատարողների ցուցակը

Էկոլոգ, անկախ փորձագետ Մ.Ավդալյան  
Համակարգչային հաշվարկը կատարվել է «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոնի» կողմից

## ԱՆՆՈՏԱՑԻԱ

Սույն նախագծում ուսումնասիրվել են «Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ արտանետումները՝ մթնոլորտն աղտոտող վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումները մշակելու նպատակով: «Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ գործունեությունը նախատեսված տարբեր տեսակի կենդանական օրգանական թափոնների վնասազերծման համար:

ՍԹԱ նորմավորման աշխատանքների անցկացման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 27.12.2012 թ. № 1673-Ն «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1673-Ն որոշումը:

ՍԹԱ -ն գիտա-տեխնիկական նորմատիվ է, որը հաստատվում է յուրաքանչյուր աղբյուրի և արտանետվող յուրաքանչյուր նյութի համար, ձեռնարկությունների արտադրական գործունեության վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի վրա սահմանափակելու նպատակով:

Աշխատանքում ի մի են բերվել ձեռնարկության որպես մթնոլորտն աղտոտող աղբյուրի արտանետումների որակական և քանակական բնութագրերը:

Ներկա աշխատանքում բերված են աղբյուրների սանիտարա-տեխնիկական հետազոտման, տեքստային, աղյուսակային, տվյալներ: Կատարված է մթնոլորտն աղտոտող նյութերի ցրման հաշվարկը:

Այժմ կազմակերպությունն ունի 1 արտադրահրապարակ, մթնոլորտն աղտոտող գործող 1 աղբյուր, որից թափոնների վնասազերծման ընթացքում արտանետվում են 6 անուն վնասակար նյութեր՝

ածխածնի օքսիդ՝ 9.176տ/տարի, ազոտի օքսիդներ՝ 1,83 տ/տարի, կախված մասնիկներ, 1.814տ/տարի, ծծմբային անհիդրիդ, 15.422տ/տարի, ածխաջրածիններ՝ 1.321տ/տարի, քլորաջրածին՝ 1.555տ/տարի, գումարային հատկությամբ 1 խումբ՝ ծծմբային անհիդրիդ, և ազոտի օքսիդներ: Թափոնների վնասազերծումն իրականացվում է գերմանական IFZW ընկերության արտադրության կիզման վառարանում և տվյալ վառարանին համապատասխան տեխնոլոգիայով, հետևապես, տվյալ ոլորտում լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառում չի նախատեսվում:

Տեխնոլոգիական և փոշեգազամաքման սարքավորումների արդիականության կիրառում չի նախատեսվում, քանի որ կիզման վառարանի հավաքակազմում առկա է երկաստիճան ցիկլոն՝ 98 տոկոս արդյունավետությամբ:

Կազմակերպության արտանետումները չեն գերազանցում այդ վնասակար նյութերի համար սահմանված չափանիշները, այդ պատճառով արտանետումների քանակն իջեցնող միջոցառումների պլան չի նախատեսվում: Աղտոտող նյութերի գետնամերձ խտությունները այդ թվում հաշվի առնելով ֆոնային աղտոտվածությունը, չեն գերազանցում համապատասխան նյութերի ՍԹՆ, այդ պատճառով անհրաժեշտ միջոցառումներ չեն նախատեսված:

Մոտակա տարիների ընթացքում ձեռնարկության ընդլայնման, վերազինման, վերապրոֆիլավորման աշխատանքներ, տեխնոլոգիական ծավալների փոփոխություններ չեն սպասվում,

Վնասակար նյութերի ՍԹԱ նորմատիվներին հասնելու ժամկետները 2018 թվականն է: Կազմակերպության կողմից արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցվելիք վնասի մեծությունը հաշվարկվել է համաձայն «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգի», հաստատված ՀՀ կառավարության 21.01.2005թ. N 91-Ն որոշմամբ,

Ցանկացած արտանետման աղբյուրի համար հասցված տնտեսական վնասն որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$U = \zeta_q \Phi_s \sum \psi_i \rho$$

որտեղ՝

U-ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամներով,  $\zeta_q$ -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, որի արժեքը հավասար է 4

$\psi_i$  -ն i-րդ նյութի համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է,

$\rho_i$  -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է

$\Phi_s$  -ն փոխադրման ցուցանիշն է,  $\Phi_s = 1000$  դրամ

$\rho_i$  գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\rho_i = q(3 \text{ ՍԹԱ}_i - 2 \text{ՍԱ}_i)$$

որտեղ՝

ՍԹԱ<sub>i</sub> -ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով,

ՍԱ<sub>i</sub> -ն i-րդ նյութի տարեկան փաստացի արտանետումներն է՝ տոննաներով:

$q=1$ ՝ անշարժ աղբյուրների համար

$\zeta_q=4$ ,  $\Phi_s = 1000$  դրամ

ածխածնի օքսիդ՝ 9.176տ/տարի , վնասակարությունն արտահայտող մեծությունը՝ 1

$$U = 4 \times 1000 \times 1 \times (3 \times 9.176 - 2 \times 1.114) = 4000 \times 9.176 = 36704 \text{ դրամ}$$

ազոտի օքսիդներ՝ 1.83 տ/տարի վնասակարությունն արտահայտող մեծությունը՝ 12.5

$$U = 4 \times 1000 \times 12.5 \times (3 \times 1.83 - 2 \times 1.83) = 49000 \times 1.83 = 89670 \text{ դրամ}$$

կախված մասնիկներ (մոխիր)՝ 1.814 տ/տարի, վնասակարությունն արտահայտող մեծությունը՝ 19.6

$$U = 4 \times 1000 \times 19.6 \times (3 \times 1.814 - 2 \times 1.814) = 78400 \times 1.814 = 63817.6 \text{ դրամ}$$

ծծմբային անհիդրիդ՝ 15.422 տ/տարի ,վնասակարությունն արտահայտող մեծությունը՝ 46

$$U = 4 \times 1000 \times 46 \times (3 \times 15.422 - 2 \times 15.422) = 184000 \times 15.422 = 2837648 \text{ դրամ}$$

ածխաջրածիններ՝ 1.321 տ/տարի, վնասակարությունն արտահայտող մեծությունը՝ 3.16

$$U = 4 \times 1000 \times 3.16 \times (3 \times 1.321 - 2 \times 1.321) = 12640 \times 1.321 = 16697.4 \text{ դրամ}$$

քլորաջրածին՝ 1.555 տ/տարի վնասակարությունն արտահայտող մեծությունը բացակայում է

ընդամենը՝ 3044537 դրամ

Տրամադրված արտանետման չափաքանակները մնում են ուժի մեջ, քանի դեռ աղտոտման անշարժ աղբյուրների և աղտոտող նյութերի մասով քանակական կամ որակական փոփոխություններ տեղի չեն ունեցել, ինչպես նաև տվյալ նյութերով ֆոնային գերնորմատիվային աղտոտվածություն չի առաջացել:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անոտացիա	3
Ընդհանուր տեղեկություններ	6
ՕՊՕ-ի հաշվարկը	7
Ձեռնարկության պլան-սխեման	8
Տնտեսվարող սուբյեկտի բնութագիրն որպես մթնոլորտն աղտոտող աղբյուր	10
Մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի անվանացանկը	11
ՍԹԱ հաշվարկի համար անհրաժեշտ նախնական տվյալներ	11
ՍԹԱ հաշվարկի համար անհրաժեշտ աղտոտող նյութերի պարամետրերը	12
Մեքենայական հաշվարկի բնութագիրը	14
Մթնոլորտի աղտոտման գործում ներդրում ունեցող աղբյուրների ցուցակը	15
Մթնոլորտում վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկի արդյունքները	15
Մթնոլորտն աղտոտող վնասակար նյութերի արտանետումների նորմատիվները	16
Կազմակերպական-տեխնիկական միջոցառումներ անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ	17
Արտանետումների վերահսկման և ՍԹԱ կատարման նպատակով նախատեսվող և իրականացվող միջոցառումներ	17
Օգտագործված գրականություն	18
Հավելվածներ	
Ֆոնային աղտոտվածության տվյալներ	19
Կլիմայական տվյալներ	20
Ռելիեֆի գործակիցը	21
Մեքենայական հաշվարկներ	22

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ գտնվում է Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի Մարգարա խճուղու վրա, Գրիբոեդով գյուղ չհասած տարածքում, մեկ հրապարակի վրա: Գործունեությունը նախատեսված է կլինիկական, սպանդային, անասնապահական և սպառման այլ օրգանական թափոնները վնասազերծելու համար:

Այլ կազմակերպություններից սահմանակից է «Գոռ և Ալիկ» ՍՊԸ, բնակելի տարածքից հեռու է 500մ-ից ավելի: Շրջակայքում հանգստյան գոտիներ, հիվանդանոցներ, մանկապարտեզներ, դպրոցներ, անտառներ, գյուղատնտեսական ցանքատարածություններ և այլն չկան:

Ունի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացություն՝ ԲՓ-125, տրված 17.10.2008թ.: Ունի նաև Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման կամ վնասազերծման, կամ պահպանման, կամ փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիա N 3:

Պետական ռեգիստրում գրանցման համարն է՝ 381.11001671, 21.01.2006թ.:

Ընկերության հասցեն է՝

Իրավաբանական՝ ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Վռամ Կոստանյան փող, 8գ

Գործունեության վայրի՝ ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Մարգարայի խճուղուղի 4/1:

## ՕՊՕ-ի հաշվարկը

Համաձայն ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N1673-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ՍԹԱ նորմատիվների նախագիծ կազմվում է այն տնտեսավարող սուբյեկտների համար, որոնք ունեն արտանետման այնպիսի աղբյուրներ, որոնց արտանետումների առավելագույն նախագծային ցուցանիշների հիման վրա հաշվարկված ՕՊՕ-ն մեկ տարում գերազանցում է երկու միլիարդ մ<sup>3</sup> չափանիշը, կամ վարկյանում գերազանցում է 2000 մ<sup>3</sup> չափանիշը:

Օդի պահանջվող օգտագործումը (ՕՊՕ) մեկ տարում կամ մեկ վարկյանում հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՕՊՕ} = \sum_{i=1}^n \frac{U_i}{\text{ՍԹԿ}_i}$$


որտեղ՝

$U_i$ -ն՝ յուրաքանչյուր-րդ նյութի առավելագույն արտանետումն է համապատասխանաբար մեկ տարում կամ վարկյանում ըստ տեխնոլոգիական ռեգլամենտի (մգ/տարի կամ մգ/վրկ), ՍԹԿ<sub>i</sub> - i- րդ նյութի համապատասխանաբար միջին օրական կամ առավելագույն միանվագ սահմանային թույլատրելի խտությունն է (մգ/ մ<sup>3</sup>):

Կազմակերպությունում արտանետվում են՝ ածխածնի օքսիդ՝ 9.176, միջին օրական ՍԹԿ- 3մգ, ազոտի օքսիդներ՝ 1,83տ/տարի, միջին օրական ՍԹԿ՝ 0.04 մգ/մ<sup>3</sup>, կախված մասնիկներ՝ 1.814, միջին օրական ՍԹԿ՝ 0.15մգ/ մ<sup>3</sup>, ծծմբային անհիդրիդ՝ 15.422 տ/տարի, միջին օրական ՍԹԿ՝ 0.05մգ/ մ<sup>3</sup>, ածխաջրածիններ՝ 1.321 տ/տարի միջին օրական ՍԹԿ՝ 1մգ/ մ<sup>3</sup>, քլորաջրածին՝ 1.555 տ/տարի, , միջին օրական ՍԹԿ՝ 0.2 մգ/մ<sup>3</sup>

$$\text{ՕՊՕ} = (9.176 \times 10^9) : 3 + (1,83 \times 10^9) : 0.04 + (1.814 \times 10^9) : 0.15 + (15.422 \times 10^9) : 0.05 + (1.321 \times 10^9) : 1 + (1.555 \times 10^9) : 0.2 = 378.25 \text{ մլրդ.մ}^3/\text{տարի} > 2 \text{ մլրդ.մ}^3/\text{տարի}$$


***ՍԹԱ մշակումը հիմնավորված է***



Տեղադրման վայրի հատակագիծը



Իրավիճակային հատակագիծը



ՀԱՏՎԱԾԸ	Երկարություն	Սահմանագիծ ստեղծագրված
1-2	22.4	ՉԱՓԵՆ ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒԹՅՈՒՆ
2-3	38.7	
3-4	34.9	ԵՎԱԿԱՆ
4-5	14.7	« ԳՈՐԱԵՎ ԱՆԿՆԱԿԱՆՈՒՄԸ »
5-6	51.0	« ԳՈՐԱԵՎ ԱՆԿՆԱԿԱՆՈՒՄԸ »
6-1	27.5	

ՑԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾ	ՑԻՆՈՒԹՅԱՆ ԱՅԿԱԳՆՈՒՄԸ
1	ԱՐՏԱԳՐԵԱԿԱՆ
2	ԳԱՆՍՈՒՅՑԻՆ
3	ԴԱՆՈՒՄ

Կատարող *Ջեյմս Զ. Արևելյան*  
 (ստորագրողը)

## ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ՈՐՊԵՍ ՄԹՆՈԼՈՐՏՆ ԱՐՏՈՏՈՂ ԱՐՔՅՈՒՐ

Ընկերության գործունեությունը նախատեսված է կլինիկական, սպանդային, անասնապահական և սպառման այլ օրգանական թափոնները վնասազերծելու համար:

Կլինիկական թափոններն իրենցից ներկայացնում են վիրաբուժական մնացորդներ, վիրահատված օրգաններ, օգտագործված և աղտոտված հագուստ, ներարկիչներ, ռենտգեն ժապավեններ, հարուցիչներով աղտոտված սննդամթերք, գիտահետազոտական կենտրոնների թափոններ, թռչունների և կենդանիների մարմիններ և այլն:

Վնասազերծումն իրականացվում է գերմանական IFZW ընկերության արտադրության 100 կգ/ժամ հզորության այրման վառարանում, ինչի շնորհիվ ապահովվում է կենսաթափոնների ջերմային վնասազերծման անվտանգությունը:

Որպես վառելիք օգտագործվում է բնական գազ՝ 27.77 մ<sup>3</sup>/ժամ, կամ 200000 մ<sup>3</sup>/տարի քանակով, պահեստային վառելիք նախատեսված չէ:

Տարեկան վնասազերծվում է 720տ թափոն:

Վառարանում տեղի է ունենում երկաստիճան այրում 2 փուլով: 1-ին փուլում 600°C պայմաններում այրվում է թափոնի նյութը, այնուհետև՝ 1200°C ջերմաստիճանում այրվում են վնասակար գազերը: Թափոններն ընդունվում են մետաղական փակ տարողություններով, տելֆերի օգնությամբ տեղադրվում վառարանի հարթակի վրա և պարբերաբար տեղափոխվում սնուցման հարթակ: Թափոնների այրումից առաջացած կոշտ մասնիկները /մոխիր / լցվում են ընդունիչ տարողության մեջ, իսկ ծխագազերը տրվում են երկրորդ փուլի հնոց՝ գազերի վերջնական այրումը 1200°C ջերմաստիճանում ապահովելու համար:

Բնական գազի և կլինիկական թափոնների այրման հետևանքով առաջացած ծխագազերը մթնոլորտ են արտանետվում հովացման ապարատից և փոշեկլանիչ 1-ին և 2-րդ աստիճանի ցիկլոններում կոշտ մասնիկների որսումից հետո:

Արտանետվում են ազոտի օքսիդներ, ածխածնի օքսիդ, կախված մասնիկներ (մոխիր), ծծմբային անհիդրիդ, ածխաջրածիններ, քլորաջրածին 10.7մ բարձրությամբ և 0.5մ տրամագծով աղբյուրից:

Վնասազերծման ընթացքում արտանետվում են նաև շատ փոքր քանակությամբ ֆուրանային նյութեր /դիօքսիներ14գ/տարի/, որոնք հաշվարկներում չեն ընդգրկվել:

Վառարանի բեռնումը նախատեսված է 30 րոպե պարբերականությամբ:

Թափոնների վնասազերծումն իրականացվում է գերմանական IFZW ընկերության արտադրության կիզման վառարանում և տվյալ վառարանին համապատասխան տեխնոլոգիայով, հետևապես, տվյալ ոլորտում լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառում չի նախատեսվում

Տեխնոլոգիական և փոշեգազամաքման սարքավորումների արդիականության կիրառում չի նախատեսվում, քանի որ կիզման վառարանի հավաքակազմում առկա է երկաստիճան ցիկլոն՝ 98 տոկոս արդյունավետությամբ:

Մոտակա տարիների ընթացքում ձեռնարկության ընդլայնում, վերազինում, վերապրոֆիլավորում, տեխնոլոգիական ծավալների փոփոխություններ չեն սպասվում, ուստի աղյուսակ 3 –ի հեռանկար սյունյակը չի լրացվում:

Տեխնոլոգիական սարքավորումների քանակը, արտանետման աղբյուրների պարամետրերը, վնասակար նյութերի արտանետումների քանակը և տեսակը նշված են աղյուսակ 3-ում:

*ՄԹՆՈՒՈՐՏ ԱՐՏԱՆԵՏՎՈՂ ՎԵՍՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ*

**ԱՂՅՈՒՄԱԿ 1**

Նյութի անվանումը	ՍԹՄ առավ.միանվագ մգ/մ <sup>3</sup>	Վտանգավորության դասը	Արտանետումները տ/տարի
Ազոտի օքսիդներ (երկ-օքսիդի հաշվարկով)	0.2	3	1.83
Ածխածնի օքսիդ	5	4	9.176
Կախված մասնիկներ (մոխիր)	0.5	4	1.814
Ծծմբային անհիդրիդ	0.5	3	15.422
Ածխաջրածիններ	1	4	1.321
Քլորաջրածին	0.2	2	1.555

*Գումարման հատկությամբ օժտված խուճը՝ Ծծմբային անհիդրիդ, Ազոտի օքսիդներ*

**ՉԱՐԿԱՅԻՆ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Կազմակերպության արտադրական գործընթացներում զարկային արտանետումներ չեն առաջանում, այդ պատճառով 2-րդ աղյուսակը չի լրացվում:

*ՄԹԱ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՍՍԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՆՅՐԱԺԵՇՏ ՏՎՅԱԼՆԵՐ*

Կատարվել է մթնոլորտն աղտոտող նյութերի աղբյուրների գույքագրում: Ըստ գույքագրման արդյունքի ՍԹԱ հաշվարկի ելակետային տվյալները կազմվել և հաշվարկվել են ԳՕՍՍ 17.2.3.02-78 - ին համապատասխան և բերված են 3-րդ աղյուսակում:

Հաշվարկները կատարվել են «Տարբեր արտադրությունների կողմից մթնոլորտն աղտոտող նյութերի արտանետումների հաշվարկի մեթոդիկան» ժողովածուի հիման վրա:

Գազի այրման արդյունքում մթնոլորտ արտանետվող ազոտի և ածխածնի օքսիդների, հաշվարկը կատարվել է վառարանների համար սահմանված գործակիցներով՝ համապատասխանաբար 2.15կգ/1000մ<sup>3</sup>գազ և 12.9կգ/1000մ<sup>3</sup>գազ/գազի ծախսը 27.77մ<sup>3</sup>/ժամ/:

Կիզման վառարանից արտանետվող վնասակար նյութերի հաշվարկը

մեկ բեռնավորման թափոնի քանակը	վնասազերծման տևողությունը	Արտանետվող նյութերը	Տեսակարար արտանետումը գ/վ
100կգ	1ժամ	ազոտի օքսիդներ	0.054առանց գազի ծախսի + 0.0166 գազի այրումից
		ածխածնի օքսիդ	0.254առանց գազի ծախսի+ 0.1գազի այրումից
		կախված մասնիկներ (մոխիր)	0.07 /երկաստիճան փոշեկլանիչում որսումից հետո/
		ծծմբային անհիդրիդ	0.595
		ածխաջրածիններ	0.051
		քլորաջրածին	0.060

Նստեցման անչափելի գործակիցն ընդունվել է՝ գազանման վնասակար նյութերի և մանր դիսպերսության աերոզոլների համար, որոնց նստեցման կարգավորված արագությունը չի գերազանցում 3-5 սմ/վրկ՝ 1, խոշոր դիսպերսության փոշու համար մաքրման բացակայության դեպքում՝ 3, որսման դեպքում՝ 2:

ՍԹԱ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՍԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ

աղյուսակ 3

Արտադրություն, արտադրամաս	Աղտոտող նյութերի առաջացման աղբյուրները				Աշխատաժամը տարում		Արտանետման աղբյուրների անվանումը		Աղբյուրների քանակը		Աղբյուրի կարգաթիվը		
	Անվանումը	Քանակը		Նվ	Հ	Նվ	Հ	Նվ	Հ	Նվ	Հ	Նվ	Հ
		Նվ	Հ										
Թափոնների վնասագերծում	Կիզման վառարան	1		7200		Խողովակ		1		1			

աղյուսակ 3 -ի շարունակությունը

Աղբյուրի կարգա թիվը	Աղբյուրի բարձրությունը, մ		Տրամագիծը մ		Գազաօդային խառնուրդի պարամետրերը արտանետման աղբյուրի ելքում				Կոորդինատները քարտեզում, մ				Գազերը մաքրող սարքերի անվանումը	Մաքրվող նյութերը	Մաքրման միջին շահագործ. աստիճանը		
	Նվ	Հ	Նվ	Հ	արագու թյունը մ/վրկ	ծավալը մ <sup>3</sup> /վրկ	ջերմաս- տիճանը	կետային աղբյուրի, աղբյուր- ների խմբի կենտրոնի, կամ գծային աղբյուրի 1-ին ծայրի	գծային աղբյուրի 2 -րդ ծայրի	X <sub>1</sub>	Y <sub>1</sub>	X <sub>2</sub>				Y <sub>2</sub>	
1	10.7		0.5		10		1.96		200		40	22			Երկաստի- ճանային ցիկլոն	կախված մասնիկ ներ	98

աղյուսակ 3 -ի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը	Նյութի անվանումը	Աղտոտող նյութերի արտանետումները						ԱԹԱ հանելու տարին
		ՆՎ			Հ (ՍԹԱ)			
		գ/վ	մգ/մ <sup>3</sup>	տ/տարի	գ/վ	մգ/մ <sup>3</sup>	տ/տարի	
1	Ազոտի օքսիդներ /երկօքսիդի հաշվ/	0.0706	35.96	1.83	0.0706	35.96	1.83	2018
	Ածխածնի օքսիդ	0.354	180.3	9.176	0.354	180.3	9.176	
	Կախված մասնիկներ (մոխիր)	0.070	35.65	1.814	0.070	35.65	1.814	
	Ծծմբային անհիդրիդ	0.595	303.0	15.422	0.595	303.0	15.422	
	Ածխաջրածիններ	0.051	30.56	1.321	0.051	30.56	1.321	
	Քլորաջրածին	0.060	35.65	1.555	0.060	35.65	1.555	

## ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտում վնասակար նյութերի ցրվածության հաշվարկները կատարելու համար ճշգրտված և ուղղված տվյալների հիման վրա կազմվել են ՍԹԱ հաշվարկի ելակետային տվյալները:

Վնասակար նյութերով մթնոլորտի աղտոտվածության հաշվարկը կատարվել է «Ռադուգա» մեքենայական ծրագրով, որը առաջարկված է օգտագործման նախկին ԽՍՀՄ Հիդրոմետ Պետական Վարչության կողմից:

Գետնամերձ խտությունների բաշխման որոշումը կատարվել է  $1000 \times 1000$ մ քառակուսու, 100մ քայլով:

### ՕՂԵՐԵՎՈՒԹԱՐԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ, ՑՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՈՐՈՇՈՂ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ: ՍԿԶԲՆԱԿԱՆ ՏԿՅԱԼՆԵՐԸ

Ցրման պայմանները որոշող օդերևութաբանական բնութագրերը և գործակիցները ներկայացված են ստորև բերված աղյուսակում: Սահմանային թույլատրելի խտությունները /կոնցենտրացիաները/ վերցված են ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված ցանկից:

ԱՂՅՈՒՍԱԿ 4

Բնութագրերի անվանումը	մեծությունը
Մթնոլորտի ստրատիֆիկացիայից կախված գործակիցը	200
Տեղանքի ռելյեֆի գործակիցը	1.0
Տարվա ամենատաք ամսվա միջին առավելագույն ջերմաստիճանը	31.2
Միջին տարեկան <<քամիների վարդը>> %-ով	
Հյուսիս	5
Հյուսիս-արևելք	5
Արևելք	23
Հարավ-արևելք	13
Հարավ	9
Հարավ-արևմուտք	8
Արևմուտք	23
Հյուսիս-արևմուտք	13
Քամու արագությունը, որի գերազանցման կրկնությունը կազմում է 5%	6 մ/վրկ

Ֆոնային կոնցենտրացիաները՝ մգ/մ<sup>3</sup>

Փոշի - 0,2, Ծծմբի օքսիդ - 0,02, Ազոտի երկօքսիդ – 0,008, Ածխածնի օքսիդ – 0,4

**ՄԹՆՈԼՈՐՏԻ ԱՄԵԼԱՄԵԾ ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐ ԱՌԱՋԱՑՆՈՂ  
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ**

Նյութի անվանումը	Առավելագույն գետնամերձ կոնցենտրացիան մգ/մ <sup>3</sup>		Աղբյուրի կարգաթիվը	Ներդրումը %	Արտադրամաս տեղամաս
	առանց ֆոնի	ֆոնով			
ազոտի օքսիդներ	0.005	0.013	1	100	կիզման վառարան
ածխածնի օքսիդ	0.06	0.46	1	100	
ածխաջրածիններ	0.0072	-	1	100	
կախված մասնիկներ (մոխիր)	0.0296	0.2296	1	100	
ծծմբային անհիդրիդ	0.01	0.104	1	100	
քլորաջրածին	0.0846	-	1	100	

**ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՑՐԱԱՆ  
ՀԱՇՎԱՐԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Մթնոլորտում վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկի արդյունքները ներկա վիճակի և հեռանկարի համար ցույց են տալիս, որ սահմանային թույլատրելի խտության գերազանցում չի դիտվում ոչ մի նյութի համար, այդ իսկ պատճառով վնասակար նյութերի համար սահմանված նորմատիվները առաջարկվում է ընդունել որպես ՄԹԱ:

/տես ԱՂՅՈՒՍԱԿ 6/

ՄԹԱ նորմատիվներ հասնելու միջոցառումների ծրագիր

ԱՂՅՈՒՍԱԿ 5

NN ը/կ	Միջոցառման անվանումը և աղտոտման աղբյուրի համարը	Իրականացման ժամկետը	Վնասակար նյութի (նյութեր) արտանետումը մինչև միջոցառումը		Վնասակար նյութի (նյութեր) արտանետումը միջոցառումն իրականացնելուց հետո	
			գ/վրկ	տ/տարի	գ/վրկ	տ/տարի

Ձեռնարկության արտանետումները չեն գերազանցում այդ վնասակար նյութերի համար սահմանված չափանիշները, այդ պատճառով արտանետումների քանակն իջեցնող միջոցառումների ծրագիր չի նախատեսվում և աղյուսակ 5-ը չի լրացվել:

**ԱՆՇԱՐԺ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐ ՄԹՆՈՒՈՐՑ ԱՐՏԱՆԵՏԵԼՈՒ  
 “ԷԿՈԼՈԳԻԱ Վ.Կ.Հ” ՍՊԸ ԶԱՓԱՔԱՆԱԿՆԵՐ  
 / ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ/**

ԱՂՅՈՒՍԱԿ 6

Աղտոտող նյութը	Ընդհանուր արտանետումը		Աղտոտող նյութը	Ընդհանուր արտանետումը	
	գ / վ	տ/տարի		գ / վրկ	տ/ տարի
Ազոտի օքսիդներ (երկօքսիդի հաշվարկով)	0.0706	1.830			
Ածխածնի օքսիդ	0.354	9.176			
Կախված մասնիկներ/մոխիր/	0.070	1.814			
Ծծմբային անհիդրիդ	0.595	15.422			
Ածխաջրածիններ	0.051	1.321			
Քլորաջրածին	0.060	1.555			



ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ  
ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Անբարենպաստ եղանակի դեպքում արտանետումների կարգավորման միջոցառումները կրում են կազմակերպչական-տեխնիկական բնույթ և գործնականորեն ընդգրկում են վնասակար նյութերի արտանետումների բոլոր աղբյուրները:

1. Թույլ չտալ սարքավորման գերբեռնված աշխատանք
- 2 Խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին
3. Սահմանափակել փոշու արտանետումը
4. Չդատարկել լուծիչներ, հեշտ բոցավառվող նյութեր
- 5.Սահմանափակել վառելիքի մատակարարումը վառարանին
6. Վնասակար նյութերի արտանետումների քանակի մեծացման դեպքում հարկ է անմիջապես դանդաղեցնել կամ ժամանակավորապես դադարեցնել տվյալ սարքավորման աշխատանքը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ  
ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՅՍԿՄԱՆ ԵՎ ՍԹԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Քանի որ ՍԹԱ կատարման համար պատասխանատու է ձեռնարկությունը, արտանետումներին հետևում և ստուգում է բնության պահպանության համար պատասխանատու անձը:

Վնասակար նյութերի արտանետումների քանակը որոշվում է այդ վնասակար նյութերի խտությունների և գազերի օդային խառնուրդների ծավալների ուղղակի չափման մեթոդներով: Ուղղակի չափման մեթոդների անհնարինության դեպքում թույլատրվում է տեսական հաշվարկի մեթոդը: Տվյալ դեպքում օգտագործվել է տեսական հաշվարկի մեթոդը:

Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ, բնակչության առողջության համար մթնոլորտի վնասաբեր աղտոտման ընթացքում ձեռնարկությունը պարտավոր է վնասակար նյութերի արտանետումները իջեցնել ընդհուպ մինչև աշխատանքի դադարեցումը:

Եթե վթարի արդյունքում ՍԹԱ -ի նորմատիվը գերազանցվում է, ձեռնարկությունը պարտավոր է այդ մասին հայտնել մթնոլորտի պահպանությունը վերահսկող մարմնին և անհապաղ միջոցներ ձեռնարկել վնասակար նյութերի արտանետումները սահմանափակելու ուղղությամբ, ինչպես նաև Առողջապահական տեսչական մարմնին տեղեկատվություն հաղորդել վթարի և ձեռնարկված միջոցառումների մասին /չափումներ մոտակա բնակավայրերում/:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ГОСТ 17.2. 3. 02 - 78 "Охрана природы. Атмосфера. Правила установления допустимых выбросов вредных веществ промышленными предприятиями".
2. Временная методика нормирования промышленных выбросов в атмосферу. Ленинград, Гидрометеиздат, 1986г.
3. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами. Ленинград, Гидрометеиздат, 1986г.
4. Рекомендации по оформлению и содержанию проекта нормативов предельно - допустимых выбросов в атмосферу (ПДВ) предприятий.
5. Временная инструкция о порядке проведения работ по установлению нормативов допустимых выбросов вредных веществ в атмосферу для отдельно нормируемых предприятий промышленности, ОНД-86.  
Обсерватория имени А.И. Воейкова Госкомгидромета, 1986г.
6. ՀՀ կառավարության 02.02.2006թ. որոշում № 160-Ն «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին»
7. ՀՀ կառավարության 27.12.2012 թ. որոշում № 1673-Ն «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 1999թ. մարտի 30-ի N 192 և 2008թ. օգոստոսի 21-ի N 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»
8. ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշում

**ՀՀ ԲՆԱԿԱՇՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ»**

**ՀԱՅԷԿՈՄՈՆԻՏՈՐԻՆԳ**

**ՀՀ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՐՆ  
ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՖՈՆԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՅԻԱՆԵՐ**

**Մթնոլորտն աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝  
հաշվարկված ըստ բնակավայրերի ազգաբնակչության**

ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ և Հրազդան քաղաքների) մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները որոշվում են ըստ հետևյալ աղյուսակի՝  
Ելնելով տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ <sup>3</sup> )			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 - 125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

ՀՀ բնակավայրերի ազգաբնակչության քանակը ընդունված է համարել Հայաստանի հանրապետության ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2010 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ» վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները

Աշտարակ

Ամենատաք ամսվա օդի միջին առավելագույն ջերմաստիճան (°C)- 32.0

Քամու ուղղության և անդորրի կրկնելիությունը (%)

Հս	Հս Արլ	Արլ	Հվ Արլ	Հվ	Հվ Արմ	Արմ	Հս Արմ	Անդորր
10	44	17	3	10	10	4	2	69

Արտաշատ

Ամենատաք ամսվա օդի միջին առավելագույն ջերմաստիճան (°C)- 33.1

Քամու ուղղության և անդորրի կրկնելիությունը (%)

Հս	Հս Արլ	Արլ	Հվ Արլ	Հվ	Հվ Արմ	Արմ	Հս Արմ	Անդորր
7	9	9	20	9	9	18	19	82

Գավառ

Ամենատաք ամսվա օդի միջին առավելագույն ջերմաստիճան (°C)- 22.3

Քամու ուղղության և անդորրի կրկնելիությունը (%)

Հս	Հս Արլ	Արլ	Հվ Արլ	Հվ	Հվ Արմ	Արմ	Հս Արմ	Անդորր
22	10	17	8	9	10	16	8	55

Արմավիր

Ամենատաք ամսվա օդի միջին առավելագույն ջերմաստիճան (°C)- 33.2

Քամու ուղղության և անդորրի կրկնելիությունը (%)

Հս	Հս Արլ	Արլ	Հվ Արլ	Հվ	Հվ Արմ	Արմ	Հս Արմ	Անդորր
5	5	24	13	9	8	23	13	65

Հրազդան

Ամենատաք ամսվա օդի միջին առավելագույն ջերմաստիճան (°C)- 24.3

Քամու ուղղության և անդորրի կրկնելիությունը (%)

Հս	Հս Արլ	Արլ	Հվ Արլ	Հվ	Հվ Արմ	Արմ	Հս Արմ	Անդորր
4	19	22	4	11	21	16	3	19



## ՌԵԼՅԵՖԻ ԳՈՐԾԱԿՑԻ ՀԱՇՎԱՐԿԸ

Կազմակերպությունը գտնվում է Արմավիրի մարզի Գրիբոյեդով գյուղի մոտ, տեղանքը հարթ է: Ըստ ՕՆԴ-86 –ի հարթ կամ թույլ կտրտված տեղանքում, որտեղ բարձրությունների տատանումը 1կմ վրա չի գերազանցում 50մ , ռելիեֆի գործակիցն ընդունվում է `1.0:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
<<Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն>> ՊՈԱԿ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ  
<<Центр мониторинга окружающей среды и информации>> ГНО

THE MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA  
"Environmental Monitoring and Information Center" SNCO

ՀՀ ք. Երևան, Չարենցի 46  
ՔԱ Գ.Երևան ւլ. Չարենցա 46  
46 Charents str. R.A. Yerevan  
Էլ. Փոստ/ ռ.պոչտա/ e-mail/ papyan@nature.am  
հեռ./տեղ./տել. (+374) 10-57-62-80

№ 24.05 635 -Ն-18

<< 19 >> <<սեպտեմբեր>> 2018թ.

<<РАДУГА>>

2018.9.19

ИСХОДНЫЕ ДАННЫЕ

Управляющие параметры расчета и характеристики  
объекта

Объект: ООО "ЭКОЛОГИЯ В.К.Г."

Таблица 1

: Число источников	:	1 :
: Число рассматриваемых вредных веществ	:	6 :
: Географическая широта местности (град.)	:	40 :
: Температура	:	33.2 :
: Районный коэффициент	:	200 :
: Шаг перебора направления ветра	:	10 :
: Характеристика перебора направления ветра	:	автоматный :
: Скорость ветра	:	6 :
: Число вкладов	:	:
: Число максимальных концентраций	:	:
: Угол	:	90 :
: Число групп суммирования	:	1 :
: Константа целесообразности проведения расчета	:	0.1 :

Տեղեկատվական վերլուծական և  
տեխնիկական սպասարկման  
ծառայության պետ

Կատարող

Հ.Գասպարյան

/ Գ.Հարությունյան

2018.9.24

СПИСОК ГРУПП СУММАЦИЙ МАТЕРИАЛОВ

Объект: ООО "ЭКОЛОГИЯ В.К.Г."

Таблица 5

Но.	Коды материалов, входящих в группы суммирования
1001	701 200

<<РАДУГА>>

2018.9.24

ВЕЛИЧИНЫ ФОНОВЫХ КОНЦЕНТРАЦИЙ

Объект: ООО "ЭКОЛОГИЯ В.К.Г."

Вещество: Взвешенные вещества (зола) Таблица 06 Страница 1

---

: КОД	: КООРДИНАТЫ ПОСТА	:	Ф О Н О В Ы Е К О Н Ц Е Н Т Р А Ц И И					:	ЕДИНИЦЫ	:
: ВЕЩЕ-	: В ОСНОВНОЙ СИС-	:	-----					:	ИЗМЕРЕНИЯ	:
: СТВА	: ТЕМЕ КООРДИНАТ	:	ШТИЛЬ	:	НАПРАВЛЕНИЕ ВЕТРА ПРИ СКОРОСТИ (2<U<U*)М/С			:	ФОНОВОЙ	:
:	:	:	(U НЕ БОЛЕЕ:-----					:	КОНЦЕНТРАЦИИ:	:
:	:	:	2М/С	:	С(320-40)	:	В(50-130)	:	Ю(140-220)	:
:	:	:	:	:	З(230-310)	:	:	:	:	:
<hr/>										
: КВ	: X(М)	:	Y(М)	:	Сф(0)	:	Сф(С)	:	Сф(В)	:
:	:	:	:	:	Сф(Ю)	:	Сф(З)	:	Ед.измерения:	:
986	0	:	0	:	0.4000	:	0.400000	:	0.400000	:
:	:	:	:	:	0.400000	:	0.400000	:	0.400000	:
<hr/>										

Вещество: Окислы азота (в пер. на двуокись) Таблица 06 Страница 1

---

: КОД	: КООРДИНАТЫ ПОСТА	:	Ф О Н О В Ы Е К О Н Ц Е Н Т Р А Ц И И					:	ЕДИНИЦЫ	:
: ВЕЩЕ-	: В ОСНОВНОЙ СИС-	:	-----					:	ИЗМЕРЕНИЯ	:
: СТВА	: ТЕМЕ КООРДИНАТ	:	ШТИЛЬ	:	НАПРАВЛЕНИЕ ВЕТРА ПРИ СКОРОСТИ (2<U<U*)М/С			:	ФОНОВОЙ	:
:	:	:	(U НЕ БОЛЕЕ:-----					:	КОНЦЕНТРАЦИИ:	:
:	:	:	2М/С	:	С(320-40)	:	В(50-130)	:	Ю(140-220)	:
:	:	:	:	:	З(230-310)	:	:	:	:	:
<hr/>										
: КВ	: X(М)	:	Y(М)	:	Сф(0)	:	Сф(С)	:	Сф(В)	:
:	:	:	:	:	Сф(Ю)	:	Сф(З)	:	Ед.измерения:	:
200	0	:	0	:	0.0400	:	0.040000	:	0.040000	:
:	:	:	:	:	0.040000	:	0.040000	:	0.040000	:
<hr/>										



Вещество: Оксид углерода

Таблица 06 Страница 1

-----  
: КОД :КОординаты поста : Ф О Н О В Ы Е К О Н Ц Е Н Т Р А Ц И И : ЕДИНИЦЫ :  
:Веще-: в основной сис- :-----:ИЗМЕРЕНИЯ :  
:СТВА : ТЕМЕ Координат : ШТИЛЬ :НАПРАВЛЕНИЕ ВЕТРА ПРИ СКОРОСТИ (2<U<U\*)М/С : ФОНОВОЙ :  
: : : (U НЕ БОЛЕЕ:-----:КОНЦЕНТРАЦИИ:  
: : : 2М/С) :С(320-40) :В(50-130) :Ю(140-220) :З(230-310): :  
-----  
: КВ : X(М) : Y(М) : Сф(0) : Сф(С) : Сф(В) : Сф(Ю) : Сф(З) :Ед.измерения:  
-----  
322 0 0 0.0800 0.080000 0.080000 0.080000 0.080000 Доли ПДК  
-----

Вещество: Сернистый ангидрид

Таблица 06 Страница 1

-----  
: КОД :КОординаты поста : Ф О Н О В Ы Е К О Н Ц Е Н Т Р А Ц И И : ЕДИНИЦЫ :  
:Веще-: в основной сис- :-----:ИЗМЕРЕНИЯ :  
:СТВА : ТЕМЕ Координат : ШТИЛЬ :НАПРАВЛЕНИЕ ВЕТРА ПРИ СКОРОСТИ (2<U<U\*)М/С : ФОНОВОЙ :  
: : : (U НЕ БОЛЕЕ:-----:КОНЦЕНТРАЦИИ:  
: : : 2М/С) :С(320-40) :В(50-130) :Ю(140-220) :З(230-310): :  
-----  
: КВ : X(М) : Y(М) : Сф(0) : Сф(С) : Сф(В) : Сф(Ю) : Сф(З) :Ед.измерения:  
-----  
701 0 0 0.0400 0.040000 0.040000 0.040000 0.040000 Доли ПДК  
-----

<<РАДУГА>>

2018.9.24

ПАРАМЕТРЫ ИСТОЧНИКОВ

Объект: ООО "ЭКОЛОГИЯ В.К.Г."

ТАБЛИЦА 7 СТРАНИЦА 1

КОД	ВЫСОТА	ТОЧЕЧНОГО	ДИАМЕТР	ПАРАМЕТРЫ ГАЗОВОЗДУШНОЙ СМЕСИ			КООРДИНАТЫ				УГОЛ МЕЖДУ	УЧЕТ
		ИЛИ ПЛОС-		СКОРОСТЬ	ОБЕМ	ТЕМПЕРАТУРА	ТОЧЕЧНОГО, НАЧАЛО	ЛИНЕЙНОГО	ЛИНИИ ЦЕНТРА	КОНЕЦ ЛИНЕЙНОГО	НАПРАВЛЕНИЯ	РЕЛЬЕФА
		КОСТНОГО					ИЛИ ЛИНИИ ЦЕНТРА	ИЛИ ЛИНИИ ЦЕНТРА	ПЛОСКОСТНОГО	ПЛОСКОСТНОГО	НА СЕВЕР	
Н ИСТ.	Н (М)	Д	W (М/С)	V (М, КУБ/С)	T (ГРАД.С)	X1 (М)	Y1 (М)	X2 (М)	Y2 (М)	С (ГРАД)	РН	
1	10.7	0.50	10.0000	1.9635	200.0	40	22	-	-	90	1.00	

<<РАДУГА>>

2018.9.24

